№ 44 Ապրիլի 18 Չորեքշաբթի 1884 Ապրիլի 18 Չորեքշաբթի № 44

ՏԱՍՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Մոսկվայից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Միխատրական ճգնաժամը Եգիպտոսում։ Նամակ Պարսկաստանից։ — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Ծաղկի պատուաստը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՑԻՑ

—

Մարտի 18-ին

Այս անգամ ես բառ առ բառ թարգմանում եմ պ. Մակարովի յօդուածի երկրորդ կէսը։

«Ընդհանուր եղրակացութիւնը, որին ես հասայ ուշի մտաք դնելով Անդրկովկասի ներկայ դրութիւնը, կայանում է այն խորին համոզմունքի մէջ, թէ այս ճոխագոյն երկիրը իր բնական հարստութեամբ գտնվում է չափազանց աննպաստ ընտեսական պայմանների մէջ այն պատճառով, որ երկրիս բոլոր արդիւնաբերութիւնը շահում են միայն Հայերը, որոնք, գրաւելուց յետոյ բոլոր առևտուրը, ճգնում են այժմ քաղաքական առաւելութիւն ևս ստանալ և աշխատում են ձեռք բերել կառավարչական պաշտօններ։

Այսպիսի մի համոզմունք իմ մէջ կայացաւ բազմաթիւ իրողութիւններից, որ անյարմար եմ դատում հրատարակել։

Առանձին նշանակութիւն չը տալով իմ անձնական հայեացքիս, անհրաժեշտ եմ համարում մէջ բերել այստեղ Կովկասաբնակ անձանց վկայութիւնները ևս և այն ինչ որ ասում է բազմալեզու լուրը և այս ոչ թէ լրոյ վրա մի որ և իցէ կարծիք հիմնելու դիտաւորութեամբ, ոչ, այլ նրա համար, որ երբեմն ականջ դնել մարդոց զրոյցներին շատ օգտաւէտ է լինում գործնական տեսակէտից։

Ներածենք նախ և առաջ պ. Զելինսկու կարծիքը, որին չէ կարելի կասկածել, որ թշնամաբար վերաբերվի դէպի հայերը, որովհետև ինքն գոլով կիսահայկական ծագումից և ուսումնասիրելով Անդրկովկասի տնտեսական դրութիւնը, իր յօդուածների մէջ ցոյց է տալիս ոչ միայն լիակատար անաչառութիւն, այլ առաւել լաւ տրամադրված է երևում դէպի հայերը։ Երևանեան նահանգի՝ Նախիջևան, Օրդուբադ և Դարալակէօզ գաւառներն նկարագրելիս, խօսելով հայերի մասին՝ պ. Զելինսկին այսպէս է որոշում նրա բնաւորութիւնը «օտար ազգերի մէջ վարած կեանքը, համարեա թէ, փոփոխել է հայերի առանձնայատկութիւնները, թուլացրել է նրանց արիական ոգին, զարգացրել է նրանց մէջ ծածկամտութիւն, խորամանկութիւնը, ընչասիրութիւն, որ դարձել է նոցա համար միակ միջոց ապահով կենցաղավարութեան», (տես сборникъ свѣдѣній о Кавказѣ. Томъ VII, երես 241)։

Անդրկովկասի հայերի մեծագոյն մասն եկած է Պարսկաստանից և Թուրքիայից։ Հայոց գիւղական ժողովուրդը պահպանել է շատ դեղեցիկ յատկութիւններ, բայց դժբաղդաբար նոյն չէ կարելի ասել քաղաքների բնակչաց մասին։ Անտարակոյս՝ բացառութիւններ ևս կան, բայց մեր խօսքը ընդհանուրի վրա է։ Անդրկովկասի հայոց ձեռքում կենտրոնացած են բոլոր նշանաւոր գումարները, որ նոքա վաստակել են միայն զօրքի համար ապրուստ և հագնելիք մատակարարելով։ Համբաւ է տարածված, որ իբր թէ ոմանք մեծ գումարներ են դիզել կամաւոր մանկութեան, կօնտրաբանդի և կեղծ թղթադրամի միջնորդութեամբ։

Ասում են թէ եկաւոր հայերի համար միանգամայն օտար են այս երկրիս շահերը, ուր նոքա ոտք հաստատեցին, փողը նրանց գլխաւոր նպատակն է և փող վաստակելու համար՝ ներելի են ամենայն միջոցներ։ Մեծ գումարների տէր դառնալով, հայը արդէն վախում է նոր ձեռնարկութեան հետամուտ լինել, այլ անշարժ կայք է գնում կամ ձեռք բերելով տոկոսաբեր թղթեր բացում է սեղանաւորի կօնտոր և պարապում է դիսկօնտի։ Արտաքին առևտուր մղելիս հայը յաճախակի թանգագին ապրանքը խառնում է վատի հետ և դրանով նուազացնում է նրա պահանջը և գինը արտասահմանում. մի և նոյն ժամանակ ճնշելով գիւղական բնակիչներին իր գնող—գործակատարների ձեռքով, նա խոչնդոտներ է յարուցանում երկրի բարգաւաճութեան դէմ և արգելում է ժողովրդին լրացնելու իր կենսական, առօրեայ պիտոյքները։

Անդրկովկասի բոլոր բնակիչների թիւը հասնում է մինչև 3,697, 275 հոգի, որոնցից հայերը միայն 682,518 հոգի են. սակայն գոլով բուն բնակիչներ քաղաքներում և գրաւելով բոլոր առևտուրը, կասեմ ասելին, ամբողջ տնտեսական վիճակը երկրիս, հայերը մեծ եռանդով պահպանում են իրանց բռնած դիրքը և աշխատում են, ըստ կարողութեան չափ ամրացնել իրերի ներկայ դրութիւնը. նրանց նպատակը դէպի ուրիշի, ոչ հայի ձեռնարկած գործը ծաղրածութեան է արժանի։ Այսպիսի հանգամանքները աննպաստ լինելով Անդրկովկասի ապագայի համար, միաստակար են ռուսաց առևտուրի և վաճառականութեան։

Հայոց վաճառականները իբրև միջնորդ ռուս առուտուրի Անդրկովկասում, աշխատում են միջին վաճառատեղերում գնել վատ յատկութեան ապրանքները և այն էլ երկար ժամանակամիջոցով։ Ռուսաց ապրանքների ստորութեան պատճառով՝ կառավարութեան բարձր պաշտօնեայների մտքում համոզմունք է զոյացել, որ իբր թէ թանգապրանք կամ բնաւ չը կայ և կամ շատ քիչ է. այստեղից—նրանց համար կօնտրաբանդը շատ բնական երևոյթ է դարձել։

Անդրկովկասի առուտուրի ներկայ դրութիւնը ուսումնասիրելու ժամանակ, ինձ անդադար զբաղեցնում էր հետևեալ միտքը, թէ որպիսի միջոցներով հնարաւոր է անմիջապէս սերտ յարաբերութիւն կապել մեր ներքին վաճառատեղեաց և Անդրկովկասի մէջ։ Այդ հարցով ես բազմիցս դիմում էի Կովկասում միշտ բնակուող անձանց, յուսալով նրանցից մի դրական պատասխան լսելու։ Յառաջ քան մեկնիլս Կովկասից, ես նոյն հարցով դիմեցի նաև իշխան Դօնդուկով-Կօրսակովին. անցեալ հոկտեմբերի 15-ին ես պատիւ ունեցայ ներկայանալու գլխաւոր կառավարչապետին և առաջին իսկ խօսքերով նորին պայծառափայլութիւնը ինձ, որպէս Մոսկվացի վաճառականիս ասաց հետևեալն.

«Դուք խափանել տուեցիք տրանզիտը և ձեր շնորհիւ կառավարութիւնը իւրաքանչիւր տարին պարտական է 400,000 ռուբլի փող հատուցանել երկաթուղուն, և բացի դրանից մաքսանոցների պահապանների ծառայութիւնն էլ կը նստի 800,000 այն ինչ վաճառատեղիք բեռնաւորված են կօնտրաբանդի ապրանքներով»։

Ես պատասխանեցի թէ անբաղդութիւն ունեցել եմ արդէն ստուգելու կօնտրաբանդի առատութիւնը Բագու և Երևան քաղաքներում և պատմեցի պ. Լերեդեվի սկսած քննութիւնը Երևանում։ Ցեմնելով որ իմ պատմութիւնս անախորժ տպաւորութիւն գործեց, ես մասամբ թեթևացրի այն և յիշեցի թէ՝ տեսած եմ ռուսաց գործուածներ, որոնք համեմատաբար արտասահմանից կօնտրաբանդի միջնորդութեամբ բերածներից առաւել ճոխ էին և արժան։

«Եթէ մեր վաճառականները փոքր ինչ ազնուութեամբ վարէին իրանց գործը, այն ժամանակ աւելորդ էր խօսելն անգամ տրանզիտի մասին։ Ես անցեալ տարի տեսայ ռուսաց ապրանքը, որ ծախվում է Պարսկաստանում—դա միանգամայն զզուելի բան էր» պատասխանեց ինձ իշխանը։

Իմ ժողոված փաստերի վրա յենլով ես հաղորդեցի իշխանին, թէ մեր վաճառականները, համարեա թէ, անմիջապէս յարաբերութիւն չունեն ոչ Անդրկովկասի և ոչ Պարսկաստանի հետ և հրաւիրելով նրա ուշադրութիւնը գործերի դրութեան այս տխուր արդասեաց վրա, խնդրեցի ցոյց տալ ինձ հնար, որով կարելի լինէր ազատվել այս դրութիւնից։

«Եթէ դուք, արդարև, կամենում էք ջերմեռանդութեամբ գործել, ձեզ անհրաժեշտ է շտեմարաններ բանալ Թեֆլիսում և Ռեշտում, առաջինը Անդրկովկասի, երկրորդը Պարսկաստանի համար», ասաց ինձ իշխանը։

(Արձագանք)

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Արձագանք» շաբաթաթերթի մէջ կարդում ենք. «Լսում ենք որ վաթսունական թուականների խմբի վերջին մոհիկան պ. Գ. Զմշկեանը ապրիլի 23-ին ներկայացնելու է ամարային թատրոնում մեծ Շեքսպիրի հռչակաւոր Օտելլոն։ Փորձերը երկու ամիս է արդէն որ ամենայն ժրաջանութեամբ շարունակվում են,—ասել է որ դերասանները ձեռքից եկածը չեն խնայում։ Կը մնայ որ հասարակութիւնը ևս ըստ արժանւոյն գնահատէ իր բազմամեայ գործող պ. Զմշկեանին»։

—

Մեզ խնդրում են տպել հետևեալը. «Ինչպէս երևում է Թիֆլիսի ձիաքարշ երկաթուղում իրաւունք ունեն միայն եւրօպական զգեստով զուգված հաստատորները, քիթը ակնոցներով թամբած ցիլինդր կրողները և պլպլան, աչք չացնող կոճակներ ունեցողները նստել։ Ուրեմն այդ բոլոր բաներից զուրկ մարդը տեղ չունի տեղիս ձիա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԾԱՂԿԻ ՊԱՏՈՒԱՍՏԸ

II

Այժմ տեսնենք ինչ բան է պատուաստը և ինչու մէջն է նրա պահպանող զօրութիւնը։ Պատուաստը՝ ծաղկին համանման մի հիւանդութիւն է (թէ և իսկապէս և զանազանվում է վերջինից) որ մարդուս մարմնի մէջ մի այնպիսի նիւթ է մացնում, որ պահպանում է բնական ծաղկով հիւանդանալուց։ Պատուաստի հիւանդութեան ընթացքը շատ թոյլ է լինում և ոչինչ վտանգ չէ ներկայացնում։

Եթէ կաշու երեսի վրա մի թեթև ծակուածք անենք և դրա մէջ մտցնենք հորթից վեր առած ծաղկի մայեայի մի փոքր քանակութիւն, այն ժամանակ 4-րդ կամ 5-րդ օրը պատուաստած տեղը՝ կորեկի սերմիկի մեծութեամբ մի բշտիկ կը բարձրանայ, որ կոշտանալով՝ու արագութեամբ մեծանալով՝ հետևեալ օրը ներկայացնում է մի գոգաւոր բան, որ իր ձևով յիշեցնում է պոռտիկը (пупокъ)։ Այդ փամփշտիկը լցվում է բաց—կարմիր, փայլուն հեղուկով։ Հետևեալ օրերում բշտիկը հետզհետէ մեծանում, հարթ ձև է ստանում և ընդունում է մի տեսակ բնաւորիչ արծաթագոյն, կամ աւելի լաւն ասած, ծիրանեգոյն փայլ։ Իր կատարեալ զարգացմանը նա հասնում է ութերորդ օրում, երբ նրա մէջի նիւթը մթագնում է և բշտիկի շուրջը ձևանում է ալ—կարմիր մի շրջանակ։ Իններորդ օրը բշտիկը թարախալից է դառնում, որ սկզբից աւելի ևս մեծանում է (մանկան ամբողջ ուսը ուռչում է և ձեռը տալիս ցաւում), բայց շուտով (11—12-րդ օրից) բշտիկը սկսում է չորանալ և մի փոքրիկ քոս է ձևացնում որ մօտ 20-րդ օրը ընկնում է և իր տեղը թողնում մի պարզ, բնաւորիչ սպի։ Հաղիւ է պատահում որ պատուաստի ընթացքում պատուաստվողի վրա չերևան տկարութեան նշաններ։ Առհասարակ, 8-րդ կամ 10-րդ օրից յայտնվում է մի թեթև տենդային դրութիւն, յոգնածութիւն, անհանգիստ քուն, ախորժակի պակասութիւն, հիւանդը մարմնջ և այրումն է զգում ծակոտած տեղերում և այդ պատճառաւ պահանջ է զգում քորվելու։

Անախորժ մարմնջը անցնելու համար, պէտք է բշտիկները յաճախ օծել մաքուր իւղով, իսկ շատ անհանգիստ մանուկների ձեռքը հարկաւոր է կապել նուրբ քաթանով, միայն զգուշանալու է որ կապերը պինդ սեղմեցրած չը լինեն։ Ուրբան անունն ու թոյլ են երևում մեր յիշած սիմպտոմները՝ համեմատելով հիւանդութեան այն սոսկալի պատկերի հետ, որ ներկայացնում է բնական ծաղիկը անպատուաստ մարդկանց վրա...։

Ամենամեծ հետազօտողների կարծիքով, ծաղկի մայեայի պահպանող զօրութիւնը կախված է նրա մէջ գտնված առանձին մանրադիտական մարմնիկներից՝ որոնք անուանվում են պատուաստի որդներ (вакциноккы) և որոնք պատկանում են... (бактерія) տեսակին։

Այդ կենդանիները ունեն ինքնուրոյն կեանք, կարող են աճել մարդու առողջ մարմնի մէջ, եթէ որ այդ մարդը առաջուց վարակված չէ եղել ծաղկով։ Զարգացման որոշ աստիճանի հասնելով, նրանք ոչնչանում են մարմնի մէջ։ Բարեյաջող հանգամանքներում (ջերմութիւն, լոյս, մթնոլորտային՝ օդի հետ հաղորդակցութիւն անուշատրի և ափիոնի լուծվածքում) այդ կենդանիները զարգանում, մանկանման թելիկներ են ձևացնում, իսկ դրանից՝ ծաղկի պատուաստը կորցնում է իր պահպանող ոյժը։ Նոյնանման երևոյթ նկատվում է և շոքի ազդեցութիւնից, չորութիւնից, ալկօօլի և թթուների ազդեցութիւնից՝ որոնք սպանում են այդ կենդանիներին։ Գործնական կողմից նշանաւոր է գտնել այն պայմանները՝ որոնք ոչ թէ ըսպանում, այլ արգելք են դառնում այդ մարմնների աճելուն, որպէս զի դրանով կարելի լինի երկար ժամանակ պահպանել պատուաստի վարակիչ զօրութիւնը։ Անցեալները Շէնգ'ին յայտնվեցաւ գտնել մի այդպիսի միջոց։ Նա գործ է ածում բիւրեղաձև ծծմբաթթու նատրոնի նորապատրաստ խառնուրդը (natr sulfuricum crystal 2 մաս) քիմիապէս մաքուր գլիցերինի մէջ (50 մաս)։

Շտապաւ գործ ածելիս՝ նա հաւասար չափով վեր է առնում մայեայ ու խառնուրդը, իսկ պահելու համար՝ երեք անգամ աւելի մայեայ. այդ դէպքում պատուաստի ոյժը չէր թուլանում երկու տարուց յետոյ։ Երկու կերպ կայ պատուաստելու. 1) հորթի պատուաստ, որ ուղղակի առնված է լինում կովից կամ հորթից (դրանով այժմ արուեստականապէս պատուաստում են) և 2) մեղմացրած (гуманизированный) պատուաստ, որ հանած է լինում այն մանկանց թեից, որոնց առաջուց պատուաստել էին հորթի պատուաստով։ Վերջինս աւելի ազդու է լինում, աւելի յաջողութեամբ է պատուաստվում, միայն անզգուշութիւնից և գործին տգէտ լինելուց կարող է յառաջանալ մի աւելի վատթար հիւանդութիւն քան ծաղիկը՝ այն է աստղեան խոտը (сифилисъ)։ Պատուաստի պահպանող զօրութիւնը կախված է ոչ միայն մայեայի, այլ և պատուաստվող անձի յատկութիւններից։ Որքան աւելի առողջ, աւելի ամրակազմ է պատուաստվող անձը, այնքան լաւ է անցնում թարախ բռնելը, այնքան աւելի լաւ է բռնում պատուաստը։

Հասակը և մարմնի կազմուածքը ոչ պակաս ազդեցութիւն են գործում։ Մանուկ հասակում աւելի լաւ է բռնում մայեան, քան նորածին երեխայի վրա։ Առհասարակ երեխաների

քարշ երկաթուղում նստելու։ Մի աղքատ, ցնցոտիների մէջ կոլոլված մարդ, որը չը նայելով արդէն առաջուց տեղ է բռնել վագոնում, իսկոյն կոնդուկտորի ստիպմամբ զրկվում է իր տեղից, եթէ մի ուրիշ պարոն (ի հարկէ ակնոցաւոր կամ ցիլինդրաւոր) տեղ է վնտռում նստելու և չէ ճարում։ Ասածիս մի օրինակ, որին ես ականատես եղայ և դա առաջինը չէ։ Ամսոյս 14-ին գնացել էի Մուշտայիդ զբօսնելու. վագոններում նստելու տեղ չը կար. մարդիկ իրար վրա էին թափվում, որովհետև եղանակը շատ լաւ էր և զբօսանքի գնացողներին թիւ չը կար։ Մուշտայիդից վերադառնալիս իմ նստած վագոնում մի գիւղացի, որ ամենից առաջ արդէն տեղ էր բռնել, զրկվեց իր տեղից. կոնդուկտորը մի ակնոցաւոր, հաստափոր պարոնի խնդիրքը աւելի յարգելով, հետևեալ անվայել խօսքերով դարձաւ դէպի գիւղացին՝ «Убирайся къ черту, здѣсь не твое мѣсто, но, удались скорѣе» և խեղճին իջեցրեց վագոնից, իսկ հաստափոր պարոնին՝ «Извольте садиться» ասելով նստեցրեց նրա տեղը։ Զարմանալի բան. միթէ խեղճ գիւղացու հինգ կոպէկանոցը դալբ էր կամ, ինչպէս ասում են, փեչատ չունէր։ Մինչև ե՞րբ պէտք է զգեստը աւելի յարգուի, գնահատվի, քան թէ նոյն իսկ մարդը։»

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են, որ ապրիլի 9-ին գիշերը, անյայտ չարագործներ յարձակվելով մէկ ռուս կառապանի վրա, դաշոյնով սպանում են նրան և տանում են նրա արծաթեայ գօտին և ժամացոյցը։ Չարագործները դեռ անյայտ են։

—

Վերին-Ադուլիսի դպրոցների հոգաբարձութեան չորս անդամներ մեզ խնդրում են տպել հետևեալը. «Վերին-Ադուլեաց երկսեռ դպրոցների հոգաբարձութիւնը այսու պատիւ ունի յայտնել հրապարակաւ իր շնորհակալութիւնը յարգելի պարոն Մկրտիչ Մէլիքեանցին, որը զոհաբերեց մեր դպրոցներին երեք հարիւր րուբլ։ Մեծայոյս ենք, որ պ. Մէլիքեանցի այս գեղեցիկ գործը բարի օրինակ կը լինի և շատ հետևողներ կունենայ։»

—

Շնորհակալութեամբ ստացանք Ս. Պետերբուրգից պրոֆէսոր Ռ. Պատկանեանից նրա հետևեալ ուսումնական հեղինակութիւնները. «Նշխարք մատենագրութեան հայոց», «Ցարութիւն վարդապետի Աղամդարեանց չափաբերականք» և «Матеріалы для Армянскаго словаря. выпускъ II.» Այդ բոլոր գրքերը տպված են Ս. Պետերբուրգում։

—

Ստացանք Նոր-Նախիջևանից «Հաշիւ Նոր-Նախիջևանի հայուհեաց թեմական ընկերութեան վասն 1883 ամի։»

—

Ստացանք Բագուից մի քանի անձինքներից 6 րուբլ «Մշակը» մի որ և է դպրոցին ուղարկելու համար։

—

Բաֆֆիի յօբելեանի առիթով ստացանք հետևեալ փողերը։ Բագուից 50 րուբլ, Ագուլիսից 75 րուբլ, Ախալցխայից 50 րուբլ, և 13 րուբլ Օդեսայից։ Հասցրինք ուր հարկն է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻՆԻՍՏՐԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

Մի քանի օր առաջ, եգիպտական այժմեան մինիստրութեան նախագահ Նուբար-փաշան հրաժարական տուեց։ Եգիպտական մինիստրութեան մէջ քարտուղարի օգնական էր Կլիֆֆորդ Լլոյդ անունով մէկը։ Ցայտնի է այժմ, որ նա, չը նայելով իր ստորադաս դրութեանը մինիստրութեան մէջ, գործում էր ինքնուրոյն կերպով, և յաճախ վիրաւորում էր եգիպտական մինիստրների ինքնասիրութիւնը. մի և նոյն ժամանակ Կլիֆֆորդ Լլոյդ գործում էր անգլիական կառավարութեան կատարեալ համաձայնութեամբ։

Նուբար-փաշան ամեն հարցուփորձին հրաժարվում է ուղիղ պատասխանելուց. սակայն ի՞նչ է պատճառը, որ դրդել է նրան հէնց այժմ հրաժարական տալ։ Նրա հրաժարական տալու լուրը մեծ ազդեցութիւն գործեց արտասահմանում, որովհետև մինիստրութեան հրաժարականը անորոշ դրութեան մէջ է ձգում Եգիպտոսի վիճակը։ Ամենից շատ յուզված է այդ դէպքում Ֆրանսիան, որովհետև նա Եւրոպայի բոլոր երկրներից աւելի հետաքրքրված է Կայիրէի գործերով։ Ֆրանսիական մամուլը մի առ մի յիշում է Կայիրէի մինիստրական բոլոր ճգնաժամերը այն ժամանակից, երբ անգլիական տիրապետութիւնը ամենազօր դարձաւ երկրում։ Այդ ժամանակից մինիստրութիւնը միայն գործիք էր անգլիական պաշտօնեաների ձեռքում։ Ամենափոքր բողոք կամ անբաւականութիւն մինիստրութեան կողմից դէպի անկումն էին տանում նրան։ Նախկին ազգասէր Ռիազ-փաշան առաջինը հրաժարական տուեց, չը ցանկանալով կամաւորապէս ենթարկել իր հայրենիքը օտարների կամայականութեանը։ Նրա տեղ նշանակվեց Շերիֆ-փաշան, որը եգիպտացիների մէջ մեծ ժողովրդականութիւն ուներ իր աղնուութեան համար։ Նա առաջնորդում էր այն ժողովրդական կուսակցութեանը, որի թոյլ լարերի վրա այնպէս ճարպիկութեամբ դիտէր խաղալ Անգլիան։ Շերիֆ-փաշան հաշտ էր ապրում անգլիական պաշտօնեաների հետ, նա ճշմարիտ հաւատում էր Անգլիայի միսսիային և նրա պատրաստականութեանը՝ կարգադրել երկրի վիճակը։ Բայց Սուդանից հրաժարվելու պահանջը բացեց նրա աչքերը։ Խոստովանելով իր անկարողութիւնը՝ մարտնչելու անգլիական կառավարութեան դէմ, Շերիֆ-փաշան հրաժարական տուեց։ Այն ժամանակ Անգլիան եգիպտական մինիստրների խորհրդի նախագահ ընտրեց օտարազգիների միջից։

Նուբար փաշան հայ է։ Նրան ճանաչում էին որպէս խորամանկ մարդու, խիստ առաձգական սկզբունքներով։ Եւ յանկարծ այդ մարդը խօսք բացեց հրաժարականի անհրաժեշտութեան մասին։ Նա գիտէր հաշտ ապրել շատերի հետ, բայց Կլիֆֆորդ Լլոյդի հետ, ինչպէս երևում է, անկարելի է հաշտ ապրել։ Մինիստրութեան քարտուղարի օգնականի պաշտօնը կառավարչական մի նոր սիստեմ է, որը Անգլիան աշխատում է առաջ տանել Եգիպտոսում։ Այդ սիստեմը ամենատգեղ և անպիտան յարաբերութիւններ ստեղծեց մինիստրութեան տեղական և անգլիական անդամների մէջ։ Հէնց այդ մոքով խօսում էր Նուբար-փաշան անգլիական թղթակիցների հետ։ Նա պարզ կերպով խոստովանեց, որ ինքն անձնական ոչինչ թշնամութիւն չունի Կլիֆֆորդ Լլոյդի հետ։ Նուբարը այնքան տակտով վարվեցաւ, որ չառաջարկեց խէդիվին, որ կամ ինքն լինի, կամ անգլիական պաշտօնեան։ Բայց Նուբարի և մինիստրութեան անգլիական անդամների մէջ հայացքների այնպիսի զանազանութիւն կայ, որ մի և նոյն գործին միատեղ ծառայելը անկարելի է։ „Իմ իդէալը, որի համար ես կռւում էի իմ ամբողջ կեանքում—այդպէս էր ասում Նուբար-փաշան „Times“ լրագրի թղթակցին, այն է, որ անգլիացիք առաջնորդեն եգիպտական ուժերին։ Անգլիացիներին պէտք է պատկանէ ինիցիատիվը, դաղափարը, եգիպտացիներին—իրագործումը։ Ես բէֆֆորմների կուսակից եմ, և ոչ թէ կատարեալ վերափոխութեան։ Ես հակառակ եմ ձեր հայացքներին. ի՞նչպէս էք դուք պահանջում, որ ես տարածող լինեմ ձեր գաղափարների։ Կարո՞ղ եմ ես արդեօք դրծել իմ համոզմունքների դէմ, իմ ամբողջ անցեալի դէմ։ Ոչ, այդ ես չեմ կարող։ Ես իմ անունը կը խայտառակէի, եթէ ճնայի,,...

Անգլիական լրագրիները, գովաբանելով Կլիֆֆորդ Լլոյդի եռանդը, հմտութիւնները և տաղանդը, խոստովանում են այնուամենայնիւ, որ նա չափազանց ծանր մարդ է։ Կլիֆֆորդ Լլոյդը չը կարողացաւ հաշտ ապրել իր ծառայակիցների հետ Անգլիայում, ուրեմն առաւել ևս դժուար էր նրա համար եգիպտացիների համակրութիւնը ձեռք բերել Կայիրէում, ուր նրա բռնակալութեան համար ազատ ասպարէզ էր բացված։

Բայց այդ բոլոր աղմուկից յետոյ շատ օտարոտի է լսել այն լուրը, որ Նուբար-փաշան և Կլիֆֆորդը երկուսը ևս մնում են իրանց պաշտօնեներում և որ ճգնաժամը անցաւ։ Ի՞նչն է դրդել նրանց հաշտվել, անյայտ է։ Անգլիական մինիստրութեան համար այս բոպէին, երբ նա շատ գործեր ունի կատարելու, Նուբար-փաշայի յանկարծակի զիջողութիւնը շատ ուրախալի է։ Բայց ճգնաժամի խնդիրը դրանով չէ վերջանում։ Նա կարող է այսօր կամ վաղը կրկին ծագել, որովհետև եգիպտական ազգաբնակութեան անբաւականութիւնը շարունակում է աճել անգլիական տիրապետութեան դէմ։

(Русск. Курьеръ)

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ռաշտ, մարտի 29-ին

Մի քանի ամիսների ընթացքում, Ռաշտի հայերի մէջ տեղի ունեցան զանազան նորանոր դէպքեր, որոնց երբէք Ռաշտցին չէ տեսել այնքան տարիներից իվեր, որ նա բնակութիւն է հաստատել այս ծովեղերեայ քաղաքում։—Առաջ քան պատմելու թէ ինչեր պատահեցան այստեղում, մենք կը յիշենք այստեղի բնակիչների մասին մի քանի խօսք։

Ռաշտը Կասպից ծովեղերեայ քաղաքներից մէկն է, ուր բազմաթիւ մահմետական բնակիչների մէջ և ապրում են 50-ի չափ հայ ընտանիքներ, որոնք դաղթականներ են Պարսկաստանի զանազան քաղաքներից, առաւելապէս Սպահանի Նոր-Ջուղայից և մի քանի տասնեակ պանդուխտ հայ վաճառականներ՝ Դավրիժու յայտնի վաճառականների տներից և Կովկասի հայ առևտրականներից (առաւելապէս Ագուլիսից և Ղարաբաղից) որոնք օգուտ են քաղում երկրի մէջ արդիւնաբերվող բերքերից՝ որք են մետաքսը, բրինձը և ծխախոտը։ Ցեղացի հայերի մեծ մասի պարապմունքն է գիներեվաճառութիւնը, որին իրանք չիրաչիութիւն են կոչում։ Մահմետականների օրէնքով արգելված լինելով ոգելից ըմպելիների գործածութիւնը, հետևապէս և նրա առևտուրը կարողացել է ազատ մնալ

ծաղիկը պատուաստում են 4 ամսականից մինչև մէկ տարեկան հասակը, որովհետև մինչև այդ ժամանակը կարող է յայտնվել ժառանգական աստղեկան ախտը։ Մայեան կարելի է վեր առնել չորս ամսականից մեծ այնպիսի մանուկներից, որոնց ծնողքը լաւ յայտնի են, ուրեմն, այդպիսի գործողութիւնը կարելի է հաւատալ միայն բժշկին *)։

Պատուաստվող մանուկը պէտք է բոլորովին առողջ լինի, վտանգաւոր է պատուաստել երբ մանուկը թոքային ցաւեր ունի։ Սուր բնաւորութեան նախընթաց հիւանդութիւններն և նմանապէս աստղեկան ախտը չեն ազդում պատուաստի վրա, իսկ երկարատև հիւանդութիւնները հիւծելով անհատին, դրա հետ թուլացնում են և պահպանող պատուաստի ընթացքը։ Կարմրուկն ու քոսը արգելում են նրա զարդացումը։ Պատուաստը անում են սովորաբար թևերի վրա, ուսերի վերին մասում 3—5 ծակուածքներ գործելով։ Սակայն մի քանի բժիշկներ տեղի տալով նորաձևութեան պահանջների առաջ, խորհուրդ են տալիս աղջկանց ոտքերի վրա անել պատուաստը, որ հաղիւ թէ գործնական է, որովհետև այդպիսով շատ հեշտ է դառնում պատուաստած տեղը քորելը և այդպիսով՝ մայեան տեղափոխելը։ Իսկ ինչ կը վերաբերի ծակվածքների քանակութեանը, գիտնականների հետազօտութիւնները ցոյց են տալիս որ «պատուաստի ոյժը հաւասար է պատուաստման որոշակի յայտնի սպինների քանակութեանը», այսինքն, այն դէպքերում որտեղ պատուաստը կարող է պահպանել բնական ծաղկով վարակվելուց, այնու ամենայնիւ, նա շատ թուլացնում է հիւանդութեան ընթացքը և չորսից մինչև եօթը յայտնի սպիներ ունեցողների մէջ չեն նկատել մահուան ոչ մի դէպք։

Ջէնների գիւտից շատ ժամանակ չանցած, կասկածներ ծագեցան պատուաստի պահպանող զօրութեան մասին և այն ժամանակ արդէն սկսեցին խօսել կրկին անգամ պատուաստելու կարիքի մասին։ Ցաճախ կրկնվող ծաղկի էպիդէմիաները մինչև անգամ կասկած ծագեցրին պատուաստման օգտաւէտութեան մասին։ Գիտնականների մէջ այդ մասին վէճեր բարձրացան։ Բժիշկների ամբողջ ընկերութիւններ ու պետութիւնները՝ մանակցեցին այդ հարցը վճռելուն։

Բոլոր խօսքերից, դատողութիւններից և վէճերից, ներկայումս, ըստ երևոյթին յայտնի և պարզ է հետևեալը. Ջէնների ձևով ծաղկի պատուաստելը, արուեստականապէս վարակելը, պահպանում է մարդուս ծաղկով հիւանդանալուց, միայն առժամանակ, ուրեմն մի որոշ ժամանակամիջոցից յետոյ՝ պատուաստը պէտք է կրկնվի։ Այդ ժամանակամիջոցը կատարեալ ճշդութեամբ որոշելը դժուար է, մօտաւորապէս պէտք է հաշուել 10-ից մինչև 25 տարի։ Ծաղիկը ոչ դի պատահաբար չէ հիւանդացրել, հիւանդացել են նրանք՝ որոնց ծաղիկը վաղուց պատուաստած է եղել. էպիդէմիայից փոքր ինչ առաջ պատուաստվածները բոլորն էլ մնացել են առողջ։ Էպիդէմիայի միջոցին, մեծ չափերով գործ դրված կրկնապատուաստը (ревакцинація), իսկոյն և եթ դադարեցրեց հիւանդութիւնը և արգելք դարձաւ նրա տարածվելուն։

Վերջապէս, էպիդէմիայի ամենասաստիկ միջոցին արած կրկնապատուաստները, չը նայելով մի քանի բժշկների երկիւղներին, բոլորովին անվնաս անցան։ Կրկնապատուաստի օգուտը ակներև կերպով տեսնվում է գերմանական զինուորների օրինակից։ Պրուսական զօրաց մէջ կրկնապատուաստը պարտաւորեցուցիչ է էպիդէմիաների միջոցին։ 1870—71 թուերում, ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ, երբ ծաղիկը սարսափելի կոտորածներ էր գործում, գերմանական զօրքի մէջ հիւանդանալու դէպքերը հաղիւ էին պատահում և աւելի թեթև տեսակիցն էին, իսկ ֆրանսիական զօրաց մէջ բազմաթիւ մարդիկ զոհ դարձան այդ ախտին։ Բայց կան բժիշկներ՝ որոնք ոչ միայն չեն ճանաչում պատուաստի որ և է օգուտը, այլ մինչև անգամ վնասակար ու զանազան հիւանդութեանց աղբիւր են համարում նրան։ Որքան և աղքատ է մեր գրականութիւնը այդպիսի գրվածքների կողմից, բայց և այնպէս՝ այդպիսի կարծիքը սկսում է սակաւ առ սակաւ մտնել հասարակութեան մէջ, ուստի աւելորդ չէ մի քանի խօսք ասել այդ մասին։

Վաթսունական թուականներում Գերմանիայի մէջ դուրս եկան բժշկապետ Նիատինգերի մի քանի գրքոյկներ՝ որոնց մէջ հեղինակը ամենասխրեղ կերպով աղաւաղում է պատմութեան ու վիճակագրութեան տուածները. նա զարդարում է իր գրուածքները հրէշաւոր նկարներով և անամօթաբար հաւատացնում է ընթերցողներին, որ իր նըկարած խոցերն ու վէրքերը առաջացել էին պատուաստից։ Իր պամֆլէտների մէջ նա ջանք է գործում ցոյց տալ, որ պարտաւորեցուցիչ պատուաստը արգելք է դարձել ազգաբնակութեան աճմանը, այլափոխել է ցեղը, վնասել է կանանց գեղեցկութեանը և մինչև անգամ պակասեցրել է ամուսնութիւնների թիւը (!?)։

Պատուաստի միւս աւելի լուրջ հակառակորդները բացասական օգուտ բերին բարձրացնելով այդ հարցը Վիէննայի միջազգային բժշկական կոնգրէսի մէջ, որտեղ և վերջնական պարտութիւն կրեցին նրանք։ Վերջապէս, ոմանք՝ ինչպէս բժշկապետ Կլէնկէ, խոստովանելով պատուաստի օգուտը, մի և նոյն ժամանակ աշխատում են խախտել ժողովրդի հաւատը դէպի

---

*) Ցաւալի է որ մեզանում ծաղիկ պատուաստողները, ըստ մեծի մասին, այնպիսի անձինք են, որոնք ոչ մարդակազմութիւն են հասկանում, ոչ տեղեկութիւն ունեն պատուաստի կանոնաւոր ընթացքի մասին և Ամենայն դիտէ թէ ոքան զոհեր պարտական են լինում դրանց ապիտութեանն ու անշնորհութեանը։ Ցաւալի է որ այդպիսի նշանաւոր գործը՝ ինչպէս պատուաստելն է, որ մեծ զգուշութիւն, կանոնաւոր հմտութիւն է պահանջում, յանձնված է համբակների։

նրանցից, այս պատճառով Պարսկաստանի մէջ այս գործը հայերի և հրէաների ձեռքումն է գտնվում, որը այս երկրում մի ամենասոր պարապմունքն է համարվում: Իսկ փոքրամասնութիւնը զբաղվում է զանազան արհեստներով, հողագործութեամբ (թամբաքու են վարում) և մանրավաճառութեամբ:

Ռաշտը ունի մի եկեղեցի, որի շինութիւնը փոքր ի շատէ յարմար է իր կոչմանը: Բայց դրան պակասում էր կից ունենալ և մի ուսումնարան, որի մասին երկար ժամանակ խօսվում էր տեղացի հայերի մի քանի հասկացող անձանց և առաւելապէս պանդուխտ վաճառականների մէջ. այս վերջիններից և ոչ մէկը չէր խնայում իրան յորդորները կարդալ այդ ազգօգուտ հիմնարկութեան անհրաժեշտութեան մասին ժողովրդի առնն դասակարգի մէջ: Բայց բանը նրանումն էր որ հիմնական դրամագլուխ չը կար և մի այդպիսի շինութիւն կառուցանելու համար պէտք էր հանգանակութիւն անէին հասարակութեան մէջ: Ամեն անգամ, երբ ժողովրդին այս և այն անձի կողմից առաջարկվում էր հանգանակութիւն, նա կրկնում էր միշտ այս խօսքերը «յառաջ վարժապետը բերել տուէք, յետոյ փող տանք»: Միամիտ հասարակութիւնը չէ հասկանում, որ առանց փողի, առանց ուսումնարան պատրաստելու, ոչ ոք չի համաձայնվի ուսուցիչ հրաւիրելու: Բայց այդ միջոցով-ինչ էր անում Ռաշտի ծխատէր քահանան: (Ռաշտի քահանաները նշանակվում են Նոր Ջուղայից Սպահանի վիճակաւոր առաջնորդի կարգադրութիւնով, և նշանակվող քահանան պէտք է վճարէ սրբազանին առնուազը յիսուն թուման պարսից փող (150 ռուբլի) աջահամբոյր և ստանայ Ռաշտի ծխատէր քահանայ լինելու պաշտօն, երկու կամ երեք տարի պայմանով. այժմս այդ վարում է այստեղ նոյն տեղացի տէր Հմայեակ Մինասեանց անուն անձը. (աշխարհական ժամանակ Սպահանում շիրաչի է եղել:) Պարզ բան էր, որ մտածել ժողովրդի կրթութեան գործի, նրա մանուկ սերունդի ուսման վրա, այդ նրա գործը չէր, նրան քահանայական պաշտօնը տալուց այդ չէին առանդել: Նրա գործը միայն կիրակի առաւօտները ժամ ասել էր, այն ևս այն միջոցներում, երբ իր տրամադրութիւնը լաւ էր, իր քէֆը ուզում էր այդ անելու: Ամբողջ օրերով առանձնացած էր իր խուցումը:

Գալով քահանայի կատարելի միւս պաշտօնների մասին, որք են պսակը, մկրտութիւնը և թաղումը, դրանք ևս նախանձելի դրութեան մէջ չեն գտնվում. ամբողջ օրեր հարկաւոր է մի պսակվողի, կամ մեռելատէրի համար, որ սակարկութիւնով գլուխ բերի քահանային վարձատրելու գործը: Քահանան նշանակում է պսակի համար մի դրամ, մեռելթաղի համար մի այնպիսի վարձատրութիւն, որ դժուար է վճարել մի թշուառի համար, որի նիւթական միջոցները սուղ են. քահանան ի նկատի չէ առնում դժբախտի դրութիւնը, և մինչև չէ տանում իր ցանկացած դրամը նա չէ կատարում իր պաշտօնը...:

Այդ բոլոր ժամանակը հասարակութեան մեծագեալ մասը անտարբեր աչքով նայում է քահանայի այդ վարմունքների վրա և փոյթ չէ տանում նրան զգուշացնելու և իր պարտաւորութիւնը իրան հասկացնելու:

Մինչդեռ այսպէս անցնում էր ժամանակը իղուր, սահում էին և հայ մանուկների կրթութեան թանգագին րոպէները: Ռաշտ ժամանեց (1883 թուականի սեպտեմբերի 25-ին) Թիֆլիզից նոյն քաղաքացի պ. Յովհաննէս Դովլաթբէգեանց անուն մի երիտասարդ, որը իր ուսումը աւարտելով Թիֆլիսի Ներսէսեան դպրոցում և 7 տարիների ընթացքում անդադար ուսուցչական պաշտօն վարելով գաւառական զանազան քաղաքներում, վերջին տարին Մօզդոկում կրծքից հիւանդացել էր և բժիշկները խորհուրդ էին տուել նրան առ ժամանակ ապրել ծովեզրեայ խոնաւ քաղաքներից մէկում: Այդ պատճառով պարոնը պարսկաստանցի իր մի քանի ծանօթների առաջարկութիւնով գալով Ռաշտ (Թիֆլիզից) սպասում էր վերանորոգել իր նախկին առողջութիւնը:

Հասնելով այստեղ, պ. Յ. Դովլաթբէգեանցը ուշիթ տուեց տեղացիների մի փոքր մասի մէջ վառել ուսումնարանական գործը. նա մի քանի պատահական խնճոյքներում, կարճ կերպով բացատրեց հասարակութեանը ուսումնարանի նշանակութիւնը, և նրա տուած օգուտները մարդկային սերունդին: Այսպիսով գործը այն դրութեան հասցրեց, որ եկեղեցու ունեցած մասնաւոր գումարովը կառուցին մի փոքր ի շատէ ուսումնարանի կոչմանը յարմար մի շէնք:

Պատրաստելով դպրոցը, հաւաքվեցան 25-ի չափ մանուկներ, սկսեցին սովորել հայոց, ռուսաց լեզուներ, թուաբանութիւն, գծանկարութիւն և երգեցողութիւն և այն յիշեալ պարոնի դասատուութիւնով, որը չը նայելով իր քայքայված առողջութեան, ընդունեց պ. պ. եղբարց Տէր-Օհանեանց *) առաջարկութիւնը և ժողովրդի մի քանի պատուելի անդամների թախանձանքը բաւականանալ մի մասնաւոր դրամական վարձատրութիւնով և պարապել շաբաթական 20 դաս այնքան ժամանակ, որքան իր առողջութիւնը կը ներէր:

Բայց ուր մնացին արդեօք այն մարդիկը, որ ասում էին թէ առաջ վարժապետը բերել տուէք, յետոյ փող տանք: Արդարև պ. Յ. Դովլաթբէգեանցի այստեղ գալուց յետոյ եղան ժողովներ և գումարներ ստորագրեցին, որ վճարեն ուսումնարանի համար, բայց համարեա ամենը մնացին լոկ թուանշաններ (բացի մի քանիներից) մինչև այսօր էլ մնում են և մինչև յաւիտեան էլ կը մնան ապառիկ: Աչքի առաջ ունենալով այդ տխուր վիճակը ուսումնարանի վերաբերութեամբ նիւթականի կողմից, իր շուրջը ժողովեց երիտասարդ մանկավարժը մի քանի եռանդոտ երիտասարդներ (որոնք պանդուխտներ են վաճառականական գործերով զբաղվող), նրանցից մի դերասանական խումբ կազմեց, սկսեցին ներկայացումն տալ յօգուտ ուսումնարանի, որ և յաջողվեց նրանց տալ երկու ներկայացումն, մէկը յունվարի 28-ին (ուր ներկայացրին «Խէչոյի թուղը» և «Երկուս էլ քաղցած ենք,» վոդեվիլները, միւսը փետրվարի 18-ին ներկայացրին «Դալալ Ղազո». թէ առաջին և թէ վերջին ներկայացումները անցան շատ յաջող և հասարակութեան այն մասը, որ պատուել էր այցելելու, լաւ տպաւորութեան մէջ վերադարձաւ իր տունը բախտաւոր համարելով իրեն, որ Ռաշտումն էլ գոնեա թատրոնական ներկայացումն տեսաւ:

Մինչդեռ այստեղ պ. Յ. Դովլաթբէգեանցը զբաղված էր կրթութեան գործով մի կողմից ուսումնարանի միջոցով մանուկ սերունդին պատրաստելով լաւ անդամ հասարակութեան համար, միւս կողմից թատրոնի միջոցով այդ մանուկների ծնողների առաջ երևան հանելով ժողովրդական մի տիպ, մի պատկեր, որը ամեն րոպէ, ամեն ակնթարթում պատահում է ամբոխին այս աշխարհում, Ռաշտի ծխատէր քահանան՝ տէր-Հմայեակը, խորթ աչքով նայելով այդ երկու հիմնարկութիւնների վրա, սկսել էր ժողովրդի այն դասակարգի մէջ, որը հոգով և մարմնով անձնատուր է լինում քահանային, զանազան ծուռ ու սխալ դաղափարներ տարածել այդ հիմնարկութիւններում կատարվելիք գործերի վերաբերութեամբ:

Նա նոցա առեղծութիւնը զրդռում էր (ռամիկ ժողովրդին էլ հէնց այդ է հարկաւոր ասել) հիւանդոտ ուսուցչի դէմ, ասելով. «Նա անաստուածութիւն է դաս տալիս երեխաներին, նրա դաս տուած գրքերի մէջ Աստուծոյ անուն չը կայ գրված, ամենը չունի, կատուի և նապաստակի պատմութիւններն են, նա բողոքական է, հերետիկոս է, անաստուած է: Իսկ այն եբրայեցւոց պատարագը (թատրոնական ներկայացմանը այսպէս է կոչում տէր-Հմայեակը), որ նա խաղում է իր խմբի հետ, աւելի տեղիք կը տայ մեր ծառաների աչքերը բացվելուն, և մեր ունեցածը մեր առաջ ուտելու, ինչպէս Խէչոն իր աղայի առջև ուտում է նրան իր բարեկամից ուղարկված թանգագին նուբարը—թուղը:

Խաւարասէր հոգևորականը գործը այն դրութեան հասցրեց, որ իր սկսած մի քանի անտեղի վէճերի պատճառով, յորդորեց Ֆանատիկոս ժողովրդի վայրենի մոլեռանդութիւնը, որոնք զանազան վիճաբանութիւններ ունեցան պ. Յ. Դովլաթբէգեանցի հետ, որը վշտանալով և օրից օր սաստկանալով հիւանդութիւնը ստիպեցաւ թողնել ուսումնարանը, Ռաշտը և ճանապարհվեց դէպի իր հայրենիքը: Պ. Յ. Դովլաթբէգեանցի հեռանալէն յետոյ ուսումնարանը մանուկները ցրվելով դպրոցից, ասպարէզ բացվեցաւ խաւարասէր քահանայի անբարոյական որդուն պղծել այդ սուրբ շինութիւնը, որպիսին է ուսումնարանը:

Թողնել այդ վերոյիշեալ ներքին խռովութիւնները, մի շատ տխուր պատահար խիստ շուտ շուտ է պատահում այս միջոցներում տեղիս հայերի մէջ, որը տանում է հայի մեծագեալ պատիւը և նրան կարմրեցնում է ամեն րոպէ, երբ նրա աչքին են ընկնում: Շատ ժամանակ չէ, որ նոր Ջուղայեցի մի երիտասարդ իր ընտանիքը ճանապարհելով Սպահան ընդունեց, մահմեդական կրօնի դաւանութիւնը և ամուսնացաւ մի պարսկուհու հետ: Դրա օրինակին հետևեց և մի ուրիշ հայ տեղացիներից (նոյնպէս նոր Ջուղայեցի) 12 տարեկան մի պատանի, որը իր անչափահասութեան պատճառով փոխանակ ամուսնանալու, խառնվեցաւ քաղաքապետի գեղեցկադէմ մանկլաւիկների հետ անբարոյական կեանք վարելու համար:

Ուզում էի նամակս վերջացնել, երբ լուր բերեցին թէ մի նորաեկ պատանի 15 տարեկան Ղարաբաղի կողմերից, եկած է Ռաշտ և գնացած մոլլաների գլխաւորի մօտ Մահմետի կրօնը ընդունելու համար: Մի քանի շուշեցի հայեր գնացել են դուրս բերելու նրան: Մոլլայի մարդիկը ընդդիմացել են և չեն տուել: Դրանք դիմել են Ռուսաց հիւպատոսարանը և յայտնել հիւպատոսին անցքը, յիշեցնելով մոլորեալի Ռուսաց հպատակ լինելը: Հիւպատոսը ուշադրութիւն չէ դարձրել և բացասական պատասխան է տուել:

Անշուշտ ընթերցողը կմտէ, որ այդպիսի քահանայ որ Ռաշտիկը ունեն, լաւ է ամենքը մահմեդականութիւն չեն ընդունում. նոյնը և ես եմ կրկնում: Հրաւիրելով հոգևոր իշխանութեան ուշադրութիւնը, առաւելապէս աղաչելով Սպահանու գերապատիւ Գրիգորիս արքեպիսկոպոսին, որ խնայէ իր ցրված ժողովրդին, ամեն մի շիրաչի տէր-Հմայեակներին քահանայ չը ձեռնադրէ, յանձնելով այդպիսիների ձեռքը խեղճ ժողովրդին աւելի տգիտութեան մէջ պահելու համար: Անցաւ այն դարը, երբ մարդիկ ապրում էին մեռած դրութեան մէջ, այժմ կենդանի և լուսաւորեալ մարդկանց դարի մէջ ենք գտնվում. ամեն կողմից ձայն են տալիս կրթութիւն, ամեն կողմից կոչում են ուսում, ամենը լսում են այդ ձայնին և հետևում են նրան: Բայց մի տեղ, ուր արձագանք չէ գտնում այդ ձայնը, մի երկիր, որ անփոփոխ պահել է իր դարևոր տգիտութիւնը, այդ Պարսկաստանն է:

Պարսկահայերը երկար դարերից ի վեր ապրելով այդ երկրի մէջ, խմորվել են պարսիկների հետ թէ խելքով և թէ համոզմունքով, միայն կրօնն է, որ նրանց ազատ է պահել միանգամայն խառնվելու իսլամի զաւակների հետ: Բայց երբ կը սթափվեն իրանց թմրութիւնից, երբ կը հասկանան իրանց սխալը: Այն ժամանակ միայն, երբ բանը իրենց լաւ վարկվը: Նրանք մեծ համարում ունեն Պարսից կառավարութեան առաջ: Ցիշեալ պ. պ. ունեն և Կովկասի քաղաքներից Բագում, Թիֆլիսում, Աստրախանում, Ռուսաստանի մէջ՝ Նիժնի տօնավաճառում և Եւրոպայի մէջ՝ Վիէննայում առանձին վաճառականական կանտորաներ:

ծաղկի պատուաստը, ասելով որ այդ գործողութիւնը անվտանգ չէ (!):

Ինչ վերաբերում է նրան՝ թէ ծաղկի պատուաստը ծնեցրել է սուրաւանդը (золотуха) և այլ հիւանդութիւններ, այդպիսի մեղադրանքը կարող է պաշտպանել միայն այն մարդը՝ որ անծանօթ է բժշկականութեան պատմութեան հետ: Միակ հիւանդութիւնը՝ որով կարելի է վարակվել պատուաստի միջոցով՝ աստղկեան ախտն է, որ ապացուցվում է և օրինակներով, բայց մթթէ՝ այդ ախտը չէ տարածվում և այլ ճանապարհներով (համբոյրի, կերակրի) և մթթէ այդ ցաւը անբուժելի է: Ո՞վ է մեղաւոր, որ ծաղկի պատուաստի գործը գտնվում է ոգէտ անձանց ձեռքին, գործադրվում է վերին ծայր անհոգութեամբ, մայեան վեր են առնում առաջին պատահածից. այստեղ պատուաստը չէ մեղաւորը՝ այլ իրանք պատուաստողները:

Մենք ամփոփում ենք մեր ասածները հետևեալ կանոնների մէջ:

1) Եթէ բժշկականութեան մէջ կան այնպիսի հաստատ միջոցներ, որոնք որոշ ժամանակամիջոցի ընթացքում պահպանում են մարդուն ծաղկով հիւանդանալուց, պատուաստը՝ առաջինը պէտք է համարվի այդ միջոցների թըւում:

2) Պատուաստի համար միշտ հարկաւոր է գործ դնել անպատճառ թարմ և ժամանակին վեր առած կովի կամ հորթի մայեայ:

3) Մանուկներից վեր առած մայեան, իբրև աւելի զօրաւորը, կարող է գործ դնել միայն բժիշկը, և այն՝ միայն այն դէպքում, երբ հորթի մայեայ չը կայ:

4) Կովի ծաղկից վեր առած մայեայով պատուաստելը՝ բոլորովին անվնաս է և ոչինչ հիւանդութիւններ չէ մտցնում մարմնի մէջ:

5) Առանց հարկաւոր զգուշութեան ու ընտրութեան, մանուկներից վերցրած մայեայով պատուաստելը, կարող է մայեայի հետ միայն մի հիւանդութիւն հաղորդել, այն է՝ աստղկեան ախտը:

6) Իւրաքանչիւր 5—10 տարուց յետոյ անհրաժեշտ է կրկնել պատուաստի գործողութիւնը՝ կրկնապատուաստ:

7) Չը կան օրինակներ, որ ծաղիկը յայտնվեր 5 և մինչև անդամ 10 տարեկան մանկանց վրա, եթէ պատուաստելուց յետոյ մնացել են բաւական թուով որոշակի յայտնի սպիներ, այլապէս ասած՝ երբ ծաղիկը լաւ էր բռնել:

8) Եթէ պատուաստը լինում է բժշկի ձեռքով, յայտնի նախազգուշութիւններն ու հոգացողութիւնները կատարելով, այն ժամանակ չը պէտք է վախենալ որ և իցէ վատ հետևանքից:

9) Աւելի լաւ է բոլորովին հրաժարվել ծաղիկը պատուաստելուց, քան հաւատ ընծայել զանազան գիշերդէրներին ու ռամիկ պատուաստողներին:

10) Ընդհանուր կանոն: Մանուկների ծաղիկը պատուաստելու է կեանքի չորրորդ ամսից մինչև մի տարեկան հասակը: Էպիդէմիայի ժամանակ կարելի է և աւելի վաղ, միայն թէ ծակուածքների թիւը աւելի պէտք է լինի: Պատուաստել կարելի է այն ժամանակ, երբ մարմինը կատարեալ առողջ է: Պատուաստելու համար՝ տարվայ ամենալաւ եղանակը՝ ամառն է:

11) Պատուաստի գործողութեան ընթացքի միջոցին, ոչինչ փոփոխութիւններ չը պէտք է անել մանկան պահելու ձևի մէջ: Հարկաւոր չէ երկիւղ կրել վանդաներից ու լողացնելուց՝ թէ պատուաստից յետոյ և թէ նոյն իսկ պատուաստի տարութեան ժամանակ: Դրա ոչ միայն անվնաս են, այլ մինչև անդամ հարկաւոր են կաշու գործողութիւնը կանոնաւորապէս պահպանելու համար:

12) Ցիծաղելի է այն սովորութիւնը, որ արգելում են մանուկի թևից մայեան վեր առնելը, որովհետև դա ոչինչ ցաւ չէ պատճառում և բոլորովին չէ պակասցնում պատուաստի զօրութիւնը: Այն մանկանց բշտիկները, որոնց մայեան չեն թողնում վեր առնելու, մեծ մասամբ քորվում են կամ ճմլվում, կեղտոտում են շապիկը, որ չորանալով կպչում է վերքերին և աւելորդ չարչարանք է պատճառում մանկանը: (Այդպիսի դէպքում չը պէտք է պրծացնել վերքերի վրա չորացած շապիկը, այլ թաց անել վանդայի մէջ): *)

*) Մանուկներից պատուաստի մայեայի վեր առնելը եկամուտի մի տեսակ աղբիւր է դառել պատուաստողների համար. ծնողք այնպէս են համոզված որ մայեայի վեր առնելով ոչնչանում է պատուաստի զօրութիւնը՝ ուստի (գնէ մեզանում) աշխատում են որ մայեան չը վեր առնուի: Դրա համար նրանք փող են վճարում պատուաստողին, որը իր կողմից չէ հոգ քաշում բացատրել որ մայեայի վերցնելը չէ պակասցնում պատուաստի ոյժը...:

Պատուաստի ժամանակ պատահած երևոյթներից գուցէ կարելի լինի ցոյց տալ մի առանձին տեսակի բշտիկներ, որոնք յաճախ յայտնվում են ամառը, պատուաստի տենդի ժամանակ: Այդ բշտիկները բոլորովին անվնաս են և իրանց ձևով յիշեցնում են քրտնախաշ անուանված բշտիկները:

Ինչ կը վերաբերի այն կարծիքին, թէ ծաղկի մայեան՝ մի շարք սերունդների միջից անցկենալով այլափոխվել, կորցրել է իր պահպանող զօրութիւնը—ստոյգ է մասամբ միայն: Ինչպէս վերև ասեցինք, մայեան չէ ազդում այն ժամանակ, երբ ուշ չեն դարձրած նրան ժողովելու ու պահելու վրա:

Ինչ և իցէ, ինչ ուզում են ասեն պատուաստի հակառակորդները, պատուաստի օգտին ամենից պերճախօս, ամենից հաստատ խօսում են թուանշանները: Զէնների պատուաստման ներմուծելից սկսեալ, ծաղկից մեռնողների թիւը, օրինակ Ֆըրանսիայում՝ $^1/_{10}$-ից իջաւ մինչև $^1/_{2378}$. մանուկ հասակում պատուաստվող մարդկանց կեանքը՝ երեք տարով աւելացաւ, իսկ կոյրերի թիւը մէկ քառորդ մասով պակասեցաւ:

Խաչատուր Առանկոզեանց

բանից անցած կը լինի և մահմեդական տարրը կը կլանի այդ ժողովուրդի մեծ մասին, ինչպէս և երկրի զանազան խորքերում կլանում է այժմ չնորհիւ մեր գործունեայ հոգևորականութեան:

Վաղենակ

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պ. ԽՄԷԼԷՎՍԿԻ, որ վերջացրել է իր լիակատար ուսումը Վարշավայի կոնսերվատորիայում և Մոսկուշկի աշակերտ է, մուզիկայի դասեր է տալիս դաշնամուրի և ֆիզհարմոնիայի վրա, նոյնպէս դաս է տալիս մուզիկայի տեսութիւնը, գարմոնի (գներալ բաս): Բնակվում է կաթոլիկական եկեղեցու տանը Կուկիայում: 6—6

ՐԱՖՖԻ

„ՋԱԼԱԼԷԴԻՆ"

տպված է հեղինակի պատկերով

ԳԻՆՆ Է 1 ՐՈՒԲԼ

Թիֆլիսում վաճառվում է

հեղինակի մոտ,—„կենտրոնական գրավաճառանոցում",—Կովկասեան գրավաճառանոցում,—Շահվերդեանի պավիլիոնում,—Շահինեանցի և Տէր-Յովսէփեանցի ծխախոտի մագազիններում:

Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն հեղինակին այդ հասցէով.

Тифлисъ. Редакція „Мшакъ".

3—20

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Պ. Արմենակ Սիւնիի հեղինակութիւնը

„ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐԵԼԻՆԵՐ"

վերնագրով գրքոյկը կաթողիկոսական եօթը ընտրելիների (Ներսէս, Խրիմեան, Մելքիսեդէկ, Եսայի, Յարութիւն, Բարդուղիմէոս և Մակար եպիսկոպոսների) կենսագրական տեղեկութիւններով: Գինէ 15 կ: Ծախվում է Թիֆլիսում—կենտրոնական և Կովկասեան գրավաճառանոցներում և պ. Շահվերդեանի պավիլիոնում:

Երևան—„Другъ-дѣтей" գրավաճառանոցում, Բագու—Մերաբովի և Ագարունովի ծխախոտի մագազինում, պ. Զախարովի քարվանսարայում: Գանձակ Հայոց ուսումնարանի ուսուցիչ պ. Գէորգ Ղարաջեանի մօտ: Ալէքսանդրապոլ—տեղական գրավաճառանոցում:

Մի և նոյն տեղերում վաճառվում է և „Հայաստանի սովը և Էջմիածինը" գրքոյկը, Էջմիածնի և սովատանջների պատկերներով. գինն է 20 կ.:

Ուրիշ տեղերից կարող են դիմել հետևեալ հասցէին. Въ Тифлисъ, на Общественной улицѣ. № 11 Мнацакану Бегларянцу.

ԹԷՅ ԱՌԱՋԻՆ ՀՈՒՆՁԻ այս տարի չափազանց **ԳՈՅՆԱՒՈՐ ԵՒ ՀՈՏԱՒԷՏ**: Այդ թէյից ստացված է **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ 50,000 **ՖՈՒՆՏ** և ծախվում է 25% էժան քան թէ ուրիշ տեղ, այսինքն լաւ ԿՕՆԳՕ թէյ 1 ր. 10 կ. մինչև 1 ր. 2 կ., շատ լաւ ԿՕՆՖԱ թէյ 1 ր. 40 կ., գերազանց ՄՕՆԻՆԳ թէյ 1 ր. 60 կ. (այս թէյը ամեն տեղ ծախվում է 2 ր. և 2 ր. 50 կ.), ԿԱՍԱՈՒ թէյ 1 ր. 80 կ. և ամենալաւ ՖՈՒ-ՋԷ-ՖՈՒ թէյ 2 ր. Ֆունտը քարշը առանց թղթի: Նոյն տեղը սովորաբար լինում է 500 ԵՐԿԱԹ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 6 ր.—60 ր.: ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂ մաղերի համար: ԵՐԿԱԹԷ ԳՐԻՉՆԵՐ ամբողջ Կովկասի համար, շոկոլադ ՖՐԱՑ, շէֆիլդի ԴԱՆԱԿՆԵՐ, հրացաններ ԴԱՈՒ, բէվոլվերներ ՎԷԲԼԻ, ԲԱՐՆԷԲԻՒ թամբեր, ՇՎԱՐՑԻ ալբոմներ:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԸ գտնվում է Թիֆլիսի մէջ, Դվորցովի փողոցի վրա Արծրունու գալէրէում № № 156 57, 158, 159, 160: Նոյն տեղը մեծ քանակութեամբ ԵՐԵԽԱՆԵՐԻ և տղամարդկանց մահճակալներ 25% էժան քան թէ ուրիշ տեղ 10% էլ դիջումն: 21—100

ՍՏԱՄՈՔՍԱՅԻՆ ՅԱՒԵՐԸ

ՊԷՊՍԻՆԵԱՆ ԳԻՆԻ „ԲՈՒԴՕ"

Այս գինին շատ համեղ է և 25 տարիների ընթացքում աջողութեամբ գործ է դրվում հեռաւեալ դէպքերում: ԱԽՈՐԺԱԿԻ ԲԱՑԱԿԱՑՈՒԹԻՒՆ, ՍՏԱՄՈՔՍԻ ՅԱՒԵՐ, և ԱՆԿԱՆՈՆ ՄԱՐՍՈՂՈՒԹԻՒՆ:

Պէպսին „Բուդօ" ճանաչված է փարիզի բժշկական Ակադէմիայից և ստացել է առաջին մեդալներ հեռաւեալ աշխարհանդէսներին՝ ՓԱՐԻԶԻ 1867 թ., ՎԻԵՆՆԱՅԻ 1873 թ. ՖԻԼԱԴԷԼՖԻԱՅԻ 1876 թ. ՓԱՐԻԶԻ 1878 թ.:

Paris: Hottot—Boudault, 7, Avenue Victoria.

Կովկասի համար պահեստ. ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԻ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ:

12—80 (ե. շ.)

ՇՕԿՕԼԱՏ ԵՒ ԴՐԱԺԷ

Ս. ՍԻՈՒ ԵՒ ԸՆԿ.

ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄՕՍԿՎԱՅԻ ՄԷՋ

Գտնվում է **ԹԻՖԼԻՍՈՒՄ** հետևեալ մագազիններում. Գ. Մ. կօպաձէի, Ս. Անիեվի, Ա. Պ. Ակօպօվի, Վ. Ֆ. Սիտօվի, Ե. Ա. Եղիազարօվի, Գ. Ա. Բաեաղչեվի, Ս. Ա. Ծովիանօվի, Յ. Ա. Բաբանօսօվի, Յ. Ի. Գուրգենօվի, Ի. Ա. Եւանգուլօվի և ուրիշ շատերի մագազիններում, նոյնպէս և **ԿՈՎԿԱՍԵԱՆ** երկրի միւս բոլոր քաղաքներում:

3—20 (15—30)

ՆՈՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ Է մեծ քանակութեամբ, եւ ծախվում է աւելի էժան քան թէ ուրիշ տեղեր, ամենայն տեսակ վէնայի մէբել յայտնի ՏՕՆԷՏԻ գործարանից: — Ֆրանսիական և ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՐԿԱԹԷ ԿՐԱՒԱՏՆԵՐ 8—30 ր.: Զամդաններ 2—50—25 ր.: Սակվոյեաժներ 1-30—12 ր:—Ճանապարհի սունդուկներ 5—25 ր: Մառաններ (Погребцы) 6—25 ր. 600 հատից աւելի ՍԱՄՈՎԱՐՆԵՐ 60 կ.—1 ր. 20 կ. Ֆունտը:—Կուխօնների պղնձէ ամաններ, Գերմանիայի երկաթէ էմալով ամաններ:—ՈՒՄԻՎԱԼՆԻԿՆԵՐ ՄՐԱՄՕՐՆԻ 38—75 ռուբլի:—Հրացաններ երկու լուլանի 6—32 ռուբլի: ՐԵՎՕԼՎԵՐՆԵՐ ամեն տեսակ 3.25—30 ր:—Պատրօններ ռեվօլվերի, Սիգարայ Ռէնգարդի ֆաբրիկայից: 5000 ֆունտից աւելի Թէց (Чай) ԵՂԲ. ՊՈՊՈՎՆԵՐԻ:—Պետերբուրգի Միխելսոնի կոֆէ 40—1 ր. 25 կ. ՀԱՑԵԼԻՆԵՐ ամեն տեսակ 3.40—50 ր.: Գինեվաճառների, գարեջրի և հանքային ջրերի (для зельтерскихъ водъ и пива) համար պրոբկայ: Սամովարի և չայի համար պադնոսներ: Դանակ չանդալներ զանազան ֆաբրիկաների 1.20—15 ր. դուժինը:—Ղայթուկ (Пухъ) Գրչակոթեր—60—4.50 կ. կրոցը: Դանակներ ջէրի: Դանակներ հացի. 25—1 ր. հատը: Կուխօնների 1.40—3.20 կ. Պրիբորը: Միս կոտորելու մաշինայ: Շվէյցարիայի ուլթուներ: Բրիտանական չայնիկներ: Կաֆէ ռիսկներ: Ամեն տեսակ: Կոֆէ աղալու մաշինաներ Ֆրանսիայից: Փոշի թղթեր: Կոնվերտներ: Սուրգուչներ: Մատիտներ: Երկաթէ գրիչներ: Սագա և տողած քարէտախտակներ: Քարեգրիչներ: Պրէս-Պապիէներ: Գդալներ սեղանի և չայի գործածութեան ՖՐԱԾԷԻ, վարշավայի և բրիտանական: Սեղանինը 1.25—12 ր.: Իսկ չայինը 45 կօպէկից—5 ր. դուժինը:—Զամդաններ ամեն տեսակ 75 կ.—12 ր.: Մարդկանց շապիկներ: Գալոշներ: Զօնտիկներ երկու սեռի. 35—6.50 հատը: Գուտապերչից, Ոսկորից, և Շիրմահի սանդրներ: Գլխի, շորի, Սապոկի և կարտի չոտկաներ: Հաշուի շչոտկաներ: Թել Մատոկի, կոճի և բրդէ (гарусъ): Ծխախոտի, և քթախոտի ամաններ ամեն տեսակ: Սապօններ Հոտաւէտ ամեն գործարանների 3—30 կ. կտորը: Հոտաւէտ ջրեր Բալլէի և ամեն տեսակ Գալանտերէյնի ապրանքներ մշտական գտանւում են այժմ և շարունակ ստացվում են ուղղակի առաջին ձեռքից ՌՈՒՍԱՍՏԱՆԻ և ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ գլխաւոր ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻՑ ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ-ՆԻԿՈՂԱՅՈՍԵԱՆՑԻ ՊԱՀԵՍՏՈՒՄ (въ складѣ) Մէջի փողոցում Կաթոլիկաց փողոցի անկիւն № 13.

Գումարով գնող վաճառականներին ծախվում է առանձին պայմաններով և զիջումով:

Օտարաքաղաքացիք կարողեն դիմել հետևեալ հասցէով: Въ Тифлисъ. МИХАИЛУ И. ТЕРЪ-НИКОГОСОВУ. (2.—1)

НА ЛѢТНІЙ СЕЗОНЪ

ПОЛУЧЕНЫ

ПОСЛѢДНЫХЪ ФАСОНОВЪ

ДАМСКІЯ, МУЖСКІЯ И ДѢТСКІЯ ШЛЯПЫ

И ДРУГІЕ МОДНЫЕ ТОВАРЫ

ВЪ СКЛАДѢ ЗАГРАНИЧНЫХЪ МОДНЫХЪ ТОВАРОВЪ

ГУЛАСПОВА

на Дворцовой улицѣ, домъ Цовьянова и Сараджева, во „дворѣ", рядомъ съ магазиномъ Варшавской обуви Гиргидова, ходъ-же во дворѣ, рядомъ съ кандитерской РЕНЬЕ.

БОЛЬШОЙ ВЫБОРЪ ДАМСКИХЪ, МУЖСКИХЪ И ДѢТСКИХЪ СОЛОМЕННЫХЪ ШЛЯПЪ съ отдѣлкою и безъ отдѣлки. ТОРГОВЛЯ ОПТОМЪ И РОЗНИЧНО.

ВСѢ ТОВАРЫ НАХОДЯЩІЕСЯ ВЪ МОЕМЪ СКЛАДѢ продаются ДЕШЕВЛЕ ПРОТИВЪ ДРУГИХЪ КОММЕРСАНТОВЪ.

Складъ открытъ ежедневно отъ 7-ми часовъ утра до 11 часовъ вечера.

Гуласповъ. 4—5

ԱԻԵՐԱԿՔ

ԱՆԻԻ

ԼՈՒՍԱՆԿԱՐԵՑ Յ. ՔԻՒՐՔՃԵԱՆ

Իշխանական և թագաւորական պալատների, ամրոցների, եկեղեցիների, մահարձանների... 40 հատ ստէրէօսկոպիկ լուսանկար տեսարաններ՝ նուրբ խնամքով պատրաստուած, ամփոփված գեղեցկաշէն պահարանի մէջ, հայերէն, ռուսերէն, գաղղիերէն և գերմաներէն բացատրութեան տետրակներով:

ԱՐԺԷ 20 ՐՈՒԲԼԻ

Դիմել կենդրոնական գրավաճառանոց Թիֆլիսում

Ստէրէօսկոպ պատկերները սովորական պատկերներից այն առաւելութիւնն ունին, որ տեսարանները աւելի բնական են ներկայացնում և այնքան կենդանի տպաւորութեամբ, որ նայողին թուում է թէ ինքը բուն իսկ տեսարանի մէջ է գտնվում:

Ուսումնարանները կարող են մաս առ մաս վճարել: 12 ռուբլի սկզբում, իսկ մնացեալ 8 ռուբլին 6 ամսուայ ընթացքում:

Անիի ստէրէօսկոպ պատկերներից շատ քիչ օրինակներ են մնացել, ապակիներն (նիգատիւներն) իսպառ ոչնչացած են: 2—3

Дозволено цензурою, Тифлисъ, 16 Апрѣля 1884 года. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час., Лорисъ-Меликовская у., д. каз.